Ազգ
Azg
13 ՄԱՐՏ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 36(5119)
ISSN: 1829-1651

# Մի ընտրությունից սահուն անցնում ենք մյուսին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Րաֆֆի Հովհաննիսյանի հացադուլը շատերի համար անհասկանալի է: Սակայն եթե դրան նայենք որպես նպատակներին հասնելու քաղաքական միջոցներից մեկի՝ ամեն ինչ իր տեղը կընկնի: Չնայած Սահմանադրական դատարանը այսօր դիրքորոշում կհայտնի Րաֆֆու հայցի վերաբերյալ, ու ՍԴ-ից, այնուամենայնիվ, Րաֆֆին նախադեպային որոշում է սպասում, եւ




չնայած Րաֆֆին ասում է, որ Սերժ Սարգսյանը մինչեւ ապրիլի 9 ինքնաբացարկ պետք է հայտնի, սակայն ակնհայտ է, որ մինչեւ ապրիլի 9 որեւէ բան չի փոխվելու: Իսկ ահա մայիսի 5-ին արդեն, քաղաքային ավագանու ընտրություններում, հարկ է, որ Րաֆֆին ապացուցի, թե նախագահական ընտրություններին ստացած քվեները հենց իրենն ու միայն իրենն են: Սա, խոստովանենք, դժվար է, քանի որ այժմ նորից ասպարեզում է Գագիկ Ծառուկյանը, որը մի շարք հասկանալի ու նաեւ մի շարք չբացահայտված պատճառներով անտեր թողեց իր ընտրազանգվածին նախագահական ընտրություններին: Ու, ընդհանրապես, ընդդիմադիր ընտրազանգվածն այնպես մոլորվեց, որ ի վերջո ստացվեց հայտնի արդյունքը:

Երեւանը, լինելով Հայաստանի կեսը նաեւ ընտրողների թվով՝ իր ընտրազանգվածով, սակայն, տարբերվում է Հայաստանի մյուս, մարզային ընտրազանգվածից: Հատկապես Երեւանում են կենտրոնացած քաղաքականապես ակտիվ շերտերը, քաղաքացիական հասարակության միավորները, ինչպես նաեւ դժգոհ ընտրազանգվածի շատ զգալի շերտը: Ակնհայտորեն, երբ ընտրություններին չեն մասնակցում մնացած ընդդիմադիրների հիմնական ներկայացուցիչները՝ մի բան է, իսկ երբ մասնակցում են՝ մի այլ բան: Բացի դրանից՝ ընդդիմադիր, թե ոչ, այլընտրանք, թե ոչ, «Բարգավաճ Հայաստանն» իրոք իր ընտրազանգվածն ուներ, ու ԲՀԿ-ի՝ ավագանու ընտրություններին մասնակցելու փաստով նրա մի զգալի շերտ կվերադառնա հենց ԲՀԿ-ին: Հայտնի չէ, թե «Ժառանգությունն» ի՞նչ ցուցակով է մասնակցելու ընտրություններին, ո՞վ է գլխավորելու նրա ցուցակը (տեսակետ կա, որ Արմեն Մարտիրոսյանը), բայց Րաֆֆի Հովհաննիսյանի՝ ցուցակը չգլխավորելու դեպքում (ինչը տրամաբանական է, քանի որ նա նախագահի թեկնածու էր) այս ուժի ընտրազանգվածը շեշտակի կարող է պակասել նախ այդ պատճառով: Այժմ իրական մրցակցություն է սկսվելու ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ՝ առավել տոկոսներ տանելու եւ առավել ներկայացված լինելու համար ավագանիում, քանի որ դրանից է կախված լինելու ոչ միայն քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, այլեւ մի շարք առանցքային վարչական պաշտոնների հարցը, որոնք ԲՀԿ-ի զգալի ներկայացվածության դեպքում ՀՀԿ-ից կարող են անցնել ԲՀԿ-ին, իսկ «Ժառանգությունը» եւ ընտրություններին մասնակցող մյուս ուժերն այս անգամ պետք է հաղթահարեն ՀՀԿ-ԲՀԿ անզիջում մրցակցությունը նախ:

Տես էջ 2

# Տեղի է ունեցել Սարգսյան-Պուտին հանդիպումը

Ըստ Հայաստանի նախագահի մամուլի գրասենյակի՝ երեկ ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում կայացած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպմանը քննարկվել են ռազմավարական գործընկեր եւ դաշնակից երկու պետությունների միջեւ քաղաքական, առեւտրատնտեսական, հումանիտար ոլորտներում համագործակցության ներկա վիճակին, երկկողմ հարաբերությունների առավել խորացմանն ու փոխգործակցության զարգացմանը վերաբերող հարցեր: Պուտինը եւս մեկ անգամ շնորհավորել է Սերժ Սարգսյանին ընտրություններում տարած համոզիչ հաղթանակի կապակցությամբ: ՌԴ նախագահի խոսքով՝ մոտ 60 տոկոս քվեն շատ լավ արդյունք է, որը վկայում է ժողովրդի վստահության մասին եւ հնարավորություն է տալիս իրականացնելու բոլոր ծրագրերը, որոնք ՀՀ նախագահն իր առջեւ դրել է՝ սկսելով նախընտրական քարոզարշավը: «Հայաստանի հետ մենք առանձնահատուկ հարաբերություններ ունենք: Ե՛վ Հայաստանում, ե՛ւ Ռուսաստանում դա լավ գիտեն: Պետք է ասել, որ ընդհանուր առմամբ, դրանք հաջողությամբ են զարգանում՝ չնայած համաշխարհային տնտեսության որոշակի դժվարություններին: Անցյալ տարի մենք ավելի քան 20 տոկոս ապրանքաշրջանառության աճ ենք ունեցել: Եվ ինձ համար շատ հաճելի է նշել, որ Ռուսաստանը շարունակում է Հայաստանի հետ առեւտրատնտեսական շրջանառության մեջ վստահորեն պահպանել առաջին տեղը:




Տես էջ 3

# Արշալույս Թարվերդյանը ընտրվել է ՀԱԱՀ ռեկտոր

Ինչպես հաղորդեցին կրթության եւ գիտության նախարարությունից, պրոֆեսոր Արշալույս Թարվերդյանը ընտրվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ: 5 տարի ժամկետով Արշալույս Թարվերդյանը կստանձնի ռեկտորի պաշտոնը:

ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նիստին մասնակցել են խորհրդի անդամներ՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը եւ այլ պաշտոնյաներ: Նիստը վարել է հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ Լեւոն Սարգսյանը:

# Պանսթարս գիսավորը՝ հյուսիսային երկնքում




Մարտի կեսերին հնարավոր կլինի երկնքում անզեն աչքով տեսնել C/2011 L4 Պանսթարս գիսավորը: Երկրին ամենամոտ կետում՝ 1,1 աստղագիտական միավոր հեռավորության վրա (աստղագիտական միավորը՝ ա.մ., Արեգակի եւ Երկրի միջեւ եղած հեռավորությունն է եւ հավասար է 150 միլիոն կիլոմետրի) գիսավորը գտնվում էր մարտի 5-ին եւ Արեգակին ամենամոտ կետում՝ 0.3 ա.մ. հեռավորության վրա՝ մարտի 10-ին: Արեգակից գրեթե նույն՝ 0,3 ա.մ. հեռավորության վրա է Մերկուրի մոլորակը: Գիսավորը շատ լավ տեսանելի կլինի հյուսիսային կիսագնդից մարտի 12-ի եւ 13-ի մթնշաղին: Այսօր կհասի խավարածիրը եւ երկնքում կհայտնվի նորալուսնից ոչ շատ հեռու: Պանսթարս գիսավորն անցնում է Արեգակին շատ մոտ, այդ պատճառով ունի մեծ, գեղեցիկ գես: Այս գիսավորի ուղեծիրը հիպերբոլական է եւ խավարածրի նկատմամբ թեքված է 84,2 աստիճանով: Սա C/2011 L4 Պանսթարսի առաջին ու վերջին ճանապարհորդությունն է Արեգակնային համակարգի միջով: Գիսավորը հայտնաբերվել է 2011թ. 7.9 ա.մ. հեռավորության վրա Հավայան կղզիներում (ԱՄՆ) տեղակայված Պանսթարս (PanSTARRS) աստղադիտակով:

Գիսավորները ոչ մեծ չափերի երկնային մարմիններ են՝ բաղկացած հիմնականում ջրային սառույցից, ածխաթթուներից եւ փոշուց: Արեգակին մոտենալիս նրանք սկսում են այրվել, եւ լուսային ճնշման ու արեգակնային քամու ազդեցությամբ առաջանում է գազից եւ փոշուց բաղկացած գես, որը սովորաբար ուղղված է Արեգակին հակառակ ուղղությամբ:

Հայկական աստղագիտական ընկերություն

ՎԱՏԻԿԱՆ

# Սիքստինյան մատուռի ծխնելույզից բարձրացավ սեւ ծուխ: Առայժմ:

Հռոմի նոր պապի ընտրության նպատակով Վատիկանում մարտի 12-ին իր աշխատանքն է սկսել կարդինալների դռնփակ ժողովը: Նախօրեին պապական նստավայրի շվեյցարական պահակախմբի անդամները, ժանդարմերիայի, կարդինալական հյուրանոցի աշխատակիցները, միկրոավտոբուսների վարորդները, ինչպես նաեւ բժիշկներն ու բուժքույրերը արտաբերել էին «գաղտնիության երդման» ավանդական բառերը:

Բուն դռնփակ ժողովից առաջ կարդինալները քննարկել էին Վատիկանի բանկի իրավիճակը:

Մարտի 12-ի առավոտյան 115 կարդինալները Սուրբ Պետրոսի տաճարում ժամերգությանը մասնակցելուց հետո մտել են Սիքստինյան մատուռ, որտեղ երդում են տվել, մասնավորապես խոստանալով «բոլոր աշխարհականներից եւ եկեղեցու սպասավորներից հույժ գաղտնի պահել պապի ընտրության արարողության այն բոլոր դեպքերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել քվեարկության արդյունքների վրա»:

Երդվելիս կարդինալները մեկը մյուսի հետեւից մոտեցել են մատուռի բեմին եւ Միքելանջելոյի «Ահեղ դատաստանի» տակ ձեռքերը դրել Աստվածաշնչի վրա:



Կարդինալների ժողովում արգելված է նոութբուքերի եւ բջջային հեռախոսների օգտագործումը. կարգազանցները կարող են ենթարկվել բանադրանքի: Լրագրողների եւ արտաքին դիտորդների ներկայությունն արգելված է:

Քվեարկության արարողության ժամանակ կարդինալները նստում են 12 փայտե սեղանների շուրջը:

The Telegraph կայքէջը նշում է, որ կարդինալների ժողովն անցկացվում է դարավոր ավանդույթներին համապատասխան, որոնք «միավորում են աստվածաբանությունը, թատերայնությունը եւ գաղտնիությունը»:

Նոր պապի ընտրությունից հետո Սիքստինյան մատուռի ծխնելույզից սովորական սեւ ծխի փոխարեն ելնում է սպիտակ ծուխ, որը գոյանում է քվեաթերթիկների եւ հատուկ գունանյութի այրման միջոցով:

Երեկ գիշեր անցկացվեց առաջին քվեարկությունը: Մատուռի ծխնելույզից բարձրացավ սեւ ծուխ:

Պ. Ք.

# Սիրիահայերի առաջնահերթ խնդիրներն են աշխատանքն ու բնակարանների ապահովվածությունը

Սիրիահայերի առաջնահերթ խնդիրներն են՝ աշխատանքով եւ բնակարաններով ապահովվածությունը, երեկ տեղի ունեցած նիստի ժամանակ ընդգծեց սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** եւ ավելացրեց. «Կարծես թե աշխատանքի տեղավորման խնդիրն ինչ-որ չափով լուծվում է: Հպարտությամբ կարող եմ ասել, այն գործատուները, որոնք սիրիահայերի են ընդունում աշխատանքի, հիացմունքով են խոսում նրանց մասին, այսինքն՝ ստեղծվել է «սիրիահայերի բրենդ» հասկացությունը, քանի որ նրանք և՛ մրցունակ են, և՛ գրագետ, և՛ պատասխանատու, և՛ նոր աշխատանքային մշակույթ են բերում մեր շուկա»:

Երեկ՝ սիրիահայերի հիմնախնդիրների լուծման արդյունքների ամփոփման ժամանակ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ **Ռուզաննա Զաքարյանը** տեղեկացրեց, որ Երեւանի քաղաքապետարանը կատարել է սիրիահայ 669 ընտանիքների տվյալների ստուգում, որից հետո պարզ է դարձել, որ Երեւանում փաստացի բնակվում են 489 ընտանիք՝ 1372 անդամով, որոնց համար առաջնային են համարվում բնակարանային վարձերի եւ զբաղվածության հետ կապված խնդիրները: Դրամական աջակցություններ են տրամադրվել 186 ընտանիքների, այդ թվում՝ բնակարանների վարձերի, կոմունալ վարձավճարների, դեղորայքի եւ կենցաղային տարատեսակ իրերի ձեռքբերման համար:

Անկողնային պարագաներ են տրամադրվել 215 ընտանիքների, պարենային աջակցություն՝ 66 ընտանիքի, իսկ բարեգործական ճաշարաններում այս պահին ընդգրկված են 11 սիրիահայեր, մինչ հոգեբանական ծառայություններ են մատուցվել 6 սիրիահայի: Զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է 131 քաղաքացի, որոնցից աշխատանքի են տեղավորվել 64-ը»:

Ռ. Զաքարյանը, առանձնացնելով Արաբկիր վարչական շրջանը եւ «Առաքելություն Հայաստան», «ՍՕՍ մանկական գյուղեր» կազմակերպությունները, ընդգծեց, որ նրանց համատեղ աշխատանքների շնորհիվ հնարավոր է եղել Արաբկիրում բնակվող շուրջ 124 ընտանիքների աջակցել 6 միլիոն դրամով: Նմանատիպ ծրագիր իրականացվել է նաեւ Շենգավիթում:

«Սոցիալական ապահովության պետական ծառայության Երեւանի տարածքային մարմիններ են դիմել եւ կենսաթոշակի իրավունք է ստացել 31 սիրիահայ, սոցիալական ծառայությունում փաստագրվել 11, նպաստի իրավունք ձեռք բերել 9, իսկ հրատապ օգնություն է նշանակվել 2 սիրիահայ ընտանիքի, մեկ ընտանիքի էլ տրամադրվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ»,- տեղեկացրեց Ռ. Զաքարյանն՝ ավելացնելով. «316 սիրիահայ դիմել են բուժ-հիմնարկներ, որոնց ցուցաբերվել է անվճար բուժսպասարկում: Քաղաքապետարանը նաեւ կազմակերպել է մի շարք մշակութային միջոցառումներ՝ սիրիահայ երեխաների համար»:



Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանն էլ ամփոփեց քաղաքապետարանի աշխատանքները. «Դպրոցներում կազմակերպվել են սիրիահայ երեխաների եւ ծնողների արեւելահայերենի ուսուցում: Հոկտեմբեր ամսին սիրիահայերի համար Նար-Դոսի անվան դպրոցում բացվեց Կիլիկյան վարժարան, որտեղ դասավանդում են հենց սիրիահայ մանկավարժներ: Սիրիահայերի համար լուծված են բոլոր խնդիրները՝ անվճար գրքեր, տեղափոխում եւ այլն»:

Ինչպես ասաց հանրակրթության վարչության պետը, սիրիահայերի խնդրանքն էր, որ դպրոցը լինի արաբալեզու եւ գործի սիրիական ծրագրով: Գ. Սողոմոնյանը ուրախությամբ նշեց, որ այդ գաղափարն այժմ կյանքի է կոչվել. «Հատկանշական է, որ միեւնույն ժամանակ երեխաները հայերեն լեզվով սովորում են կրոնի պատմություն: Այժմ այդ ուսումնական հաստատությունում սովորում է 370 երեխա»:

Գայանե Սողոմոնյանն ընդգծեց, որ արդեն աշխատանքներ են տարվում ռուսաց լեզվի ուսուցումը սիրիահայերի շրջանում կազմակերպելու համար. «Ռուսերենը պետք է ուսուցանվի արեւմտահայերենով, որի պատճառով կան որոշ խնդիրներ: Դրանք հարթվելուն պես, սեպտեմբերից՝ որպես առարկա, երեխաները դպրոցում կանցնեն նաեւ ռուսաց լեզու»:

Այժմ սիրիահայ երիտասարդների խնդիրներից մեկն ավարտական քննություններն են, քանի որ պետք է հանձնեն սիրիական ծրագրով, որի առթիվ Գ. Սողոմոնյանն ասաց. «Այս հարցերը կրթության եւ գիտության նախարարությունում քննարկվում են, որպեսզի երիտասարդների ստացած վկայականն անցնի նաեւ Սիրիայում»:

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Զաքարյանը բարձրացրեց նաեւ Հայաստան վերադարձած սփյուռքահայերի խնդիրներից մեկը. «Անթույլատրելի երեւույթ է, որ ընդամենը 10-11 սիրիահայ ընտանիք է նպաստ ստանում: Շատերը փաստաթղթերի պատճառով չեն կարողանում նպաստ ստանալ: Կառավարությանը պետք է առաջարկել, որ փոփոխություն կատարեն ինչ-ինչ կետերում եւ սիրիահայերին հաշվառեն փաստացի բնակության հասցեով, որպեսզի կարողանան գոնե այդ նպաստն ստանալ»:

Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ի պատասխան բարձրացված խնդրի, ասաց. «ՀՀ նախագահի հանձնարարությամբ ոստիկանությունն ունի այդ իրավունքը՝ հաշվառել բոլոր սիրիահայերին այն տարածքներում, որտեղ նրանք ապրում են, եւ դա որեւէ բարդություն չի ստեղծի այն բնակարանների սեփականատերերի համար, որոնք վարձով են տվել դրանք»:

Հ. Հակոբյանը սիրիահայերի խնդիրները համակարգող կառույցի ներկայացուցչին հորդորեց լուծել դրանք եւ ավելացրեց. «Սիրիահայերը կարող են հաշվառվել նաեւ սփյուռքի նախարարության հասցեով: Այս միջոցով մենք նաեւ կունենանք սիրիահայերի իրական վերջնական թիվը»:

Ընդգծենք, որ Հայաստանի նախագահի որոշմամբ, 100.000 ԱՄՆ դոլար է ուղարկվելու Սիրիայի հայ համայնքին:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ծերունին եւ... ծովը՝ չէ, քաղաքականությունը

Ծերունի Մամիկոնը դողդոջուն ձեռքերով վերցրեց «Կայծեր» վեպը, մյուսների՝ «Խաչագողի հիշատակարան»-ի, «Սամվել»-ի, «Խենթ»-ի կողքից ու մաքրեց գրքի վրա կուտակված փոշին. վաղուց չէր ընթերցվել: Ծերունին սկսեց վերընթերցել «Կայծերը», իսկ առհասարակ, երիտասարդ տարիքում հատկապես խենթանում էր «Խենթի» համար... Մամիկոն պապիկը շուտով դուրս եկավ տնից, ուշանում էր, միտինգի պետք է հասներ:

Ընդհանուր առմամբ ծերունի Մամիկոնը քաղաքականապես հասուն մարդ էր, կարելի է ասել, անգամ քաղաքական հարուստ փորձ ունեցող, պատմական, քաղաքական կարեւոր իրադարձությունների ականատես: Եվ ոչ միայն պատմական-քաղաքական. Մամիկոն պապն այստեղ ոչ մի հարազատ չուներ, կինը վաղուց չկար, մահացավ, երբ ավագ որդին զոհվեց Ղարաբաղում, ընկերները եւս մահացել էին, ու, եթե ճիշտն ասենք, ապա Մամիկոն պապը շատ էլ ուրախ էր, որ հարազատ չուներ. «Հարազատի հավես չունեմ ես», հաճախ կրկնում էր պապը՝ գուցե ինքն իրեն առաջին հերթին դրանում վստահեցնելու համար:

Հասավ Ազատության հրապարակ, երեկվա ժողովուրդն էլ այստեղ չէր. երեկ բազմահազարանոց միտինգ էր, այսօր՝ մի քանի տասնյակ մարդու ներկայությամբ, հացադուլ...Մարդիկ ուտել սիրում են, մարդիկ լուրջ շարժառիթ պետք է ունենան, որ չուտեն, մարդկանց ամեն քայլի ամենամեծ շարժառիթը հենց ուտելն է: Իսկ բողոքել, բողոքավորներով հավաքվել, բռունցքները վեր բարձրացնել ու գոռալ, գոչել, ընդ որում գոռալ ու գոչել այն, ինչ պետք է գոռալ ու գոչել, երբեք այդ գոչյուններով արտահայտած մտքերի, նպատակների, երազանքների կատարմանը հասած չլինելով, բայց հավատալով, հույսով, մարդիկ սիրում են... Մամիկոն պապն ընկճված էր, երեկ գիշեր «Կայծերն» էր վերընթերցում, հույս ուներ այսօր հրապարակում կայծեր տեսնել, հույս մնաց...

Երեկոյան ժամի բակի խանութ մտավ Մամիկոն պապը. հաց գնեց, դողդոջուն ձեռքերով տան դուռն էր բացում, երբ հնչեց հեռախոսազանգը, որդին էր, արդեն որերորդ անգամ կանչում էր մոտը՝ Սոչի. այս անգամ Մամիկոն պապը համաձայնեց: Քնելուց առաջ նա վերընթերցում էր «Խաչագողի հիշատակարանը»... Ծերունի Մամիկոնը քաղաքականապես հասուն մարդ էր, կարելի է ասել՝ անգամ քաղաքական հարուստ փորձ ունեցող, պատմական, քաղաքական կարեւոր իրադարձությունների ականատես:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Բարելավվում են առողջապահության ոլորտի օրենսդրական կարգավորումները

**Վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ կառավարությունում երեկ տեղի է ունեցել Հայաստանի տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդի հերթական նիստը:**

**ՀՀ կառավարության աշխատակազմի Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի ծրագրերի իրականացման կենտրոն պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար Արմեն Եղիազարյանը ներկայացրել է առողջապահության ոլորտի առաջարկությունների փաթեթը:**

**Ուսումնասիրվել եւ օրենսդրական բարեփոխումների առաջարկներ են ներկայացվել բժշկական օգնության եւ սպասարկման իրականացման լիցենզավորման ոլորտում:**

**Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի կողմից առաջարկություններ են ներկայացվել նաեւ փրկարար ծառայողների, զինծառայողների, զինծառայողներին հավասարեցված անձանց ու նրանց ընտանիքների անդամների անվճար բժշկական օգնության եւ սպասարկման գործընթացի բարելավման վերաբերյալ:**

**Իրավական ակտերի փաթեթի ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվեն եւ կբարելավվեն մի շարք իրավական ակտեր, միաժամանակ կկրճատվեն բիզնես գործընթացներ:**

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

# Մի ընտրությունից սահուն անցնում ենք մյուսին

*1-ին էջից*

Ստացվում է, որ անկախ նրանից, որ «ժառանգությունն» ու նրա լիդերը չնայած պայքարում են նախագահական ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելու համար, սակայն զուգահեռ պետք է հասցնեն ներկայացված լինել քաղաքային ավագանու ընտրություններին, այլապես կկորցնեն համակիրների զգալի մասին, չեն ստանա ներկայանալի ձայներ եւ կամաց-կամաց կզրկվեն մրցակցային քաղաքական ուժ լինելու համարումից, որը վերադարձավ նրանց այս նախագահական ընտրություններով:

Վերադառնալով ԲՀԿ-ին՝ նշենք, որ վաղ էին այն կանխատեսումները, ըստ որոնց ԲՀԿ-ն գնացել է լուսանցք կամ ԲՀԿ-ն ինքն իրեն կործանեց՝ չմասնակցելով նախագահական ընտրություններին: Հենց գուցե քաղաքապետի պաշտոնը այն գինն է, որ կուզենար այս քաղաքական ուժը ընտրություններին չմասնակցելու եւ ՀՀԿ-ի թեկնածուի համար անվտանգ ընտրություն այդպիսով ապահովելու համար: Ճիշտ է, սակայն, որ ոչ ԲՀԿ-ն, ոչ ՀՀԿ-ն չէին մտածում, որ բողոքավոր ընտրազանգվածն այս անգամ հաստատակամ կգտնվի եւ այդքան ձայներ կապահովի մի երրորդ ուժի թեկնածուի՝ Րաֆֆու համար: Հիմա այս երկու ուժերը ստիպված են հաշվի նստել քաղաքական այս նոր իրավիճակի հետ, քանի որ ողջ քաղաքական դաշտի երկբեւեռ կառավարման պրոեկտը՝ ՀՀԿ-ԲՀԿ կամ իշխանություն-այլընտրանք (ընդդիմության փոխարեն կամ ընդդիմությունն իր մեջ տարրալուծելով) չստացվեց եւ այժմ նոր սցենարներ են գծվելու, որտեղ գործոն կլինի նաեւ բուն ընտրողը, որին ավելի վաղ անտեսում էին:

Սակայն մինչ այդ պետք է Րաֆֆու պահանջների խնդիրը լուծվի, քանի որ Ր. Հովհաննիսյանի նոր ջանքը՝ հացադուլը, ուղղված է նաեւ համակիրների զանգվածը պահելուն, որը, դատելով հանրահավաքի ալիքի սահուն մարումից, շատ դժվար խնդիր է, բայց, նկատենք, Րաֆֆին անընդհատ նոր միկրոտեխնոլոգիաներ է մտածում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Իրանցի ըմբշամարտիկը՝ հայուհուն. «Թուրքերը լավ են արել, որ ձեզ կոտորել են»

38-ամյա Ժաննա Զաքարյանը Արցախյան պատերազմի մասնակից է: Ամուսնու հետ կամավոր մեկնել է ռազմի դաշտ: Կրթությամբ բուժքույր Ժաննան 1991-ին Լաչինում էր, 1993-ին՝ Աղդամում եւ Մարտակերտում, 1994-ին՝ Ֆիզուլիում եւ Հադրութում:

«Ինձ ոչ ոք չի ստիպել, որ գնամ կռիվ: Ես ու ամուսինս որոշեցինք մեկնել առաջին գիծ՝ պաշտպանելու մեր հայրենիքը», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասում է նա: Կյանքի բերումով Ժաննան այժմ բրոկեր է, հաճախ օրավարձով բնակարան է տալիս տուրիստներին ու քանի որ պարսկերեն գիտի՝ հիմնականում համագործակցում է պարսիկ տուրիստների հետ:

Նախորդ տարվա հուլիսի 31-ին, երբ Ժաննան Հանրապետության հրապարակում սպասել է պարսիկ ընտանիքի, իրանցի Աբուլֆազլ Ղոլամ Հասան Դոլացխահին Ժաննային եւ մոտակայքում գտնվող բազմաթիվ հայերի վիրավորել է, հայհոյել Հայաստանն ու ասել, որ սա երկիր չէ, սրանք ժողովուրդ չեն, ու թուրքերը լավ են արել, որ հայերին կոտորել են, ավելին, պետք է ամբողջությամբ քոքից կտրեին: «Ես չդիմացա, ասացի՝ «Ա՛յ կեղտոտ շուն, եկել ես իմ հողի մեջ ապրում ես ու իմ հողի վրա իմ երկրին ու ժողովրդին նման բանե՞ր ես ասում: Իմ այդ խոսքերի վրա նա առաջ եկավ ու ինձ խփեց՝ սկզբից ոտքիս, հետո ձեռքերիս, մարմնիս, ուզում էր գլխիս հարվածել, բայց ես ձեռքերով էի պաշտպանվում: Հետո սկսեց մազերիցս քաշել ու անընդհատ հայհոյում էր: Այդ ժամանակ տարածքում բազմաթիվ իրանցիներ ու հայեր կային, նրանք հետեւում էին, թե ինչ է կատարվում: Ես սկսեցի օգնություն կանչել, հայ տղաները ցանկանում էին ինձ օգնել, բայց ոստիկանները եկան: Ինքն ուզում էր փախչել ու ձեռքս կծեց, բայց չկարողացավ, ու մեզ բոլորիս տարան բաժին», ասաց Ժաննան:

Ոստիկանությունում իրավապահ մարմինների ներկայացուցիչներն արձանագրել են դատաբժշկական փորձաքննության արդյունքները: Իրանցին Ժաննային պատճառել էր թեթեւ մարմնական վնասվածքներ, սալջարդեր: «Ոստիկանությունում ցուցմունք տվեցի եւ պատմեցի կատարվածը, հայ երկու վկաներն էլ ասացին, որ իրանցին ոչ միայն ինձ է հայհոյել, այլ բոլոր հայերին ու Հայաստանը»:

Ժաննան պատմում է, որ մի քանի ամսվա ընթացքում նախաքննական մարմինը, ոստիկաններն ու հետագայում նաեւ դատարանում իրեն համոզել են, երբեմն պահանջել, որպեսզի հրաժարվի հայցից, այսպես ասած՝ որոշակի գումարի դիմաց «բարիշի» սանձարձակ իրանցու հետ: «Ինձ իր գումարները հարկավոր չեն, ես էլ, ամուսինս էլ աշխատում ենք, փառք Աստծո, եթե ինքն ինձ վիրավորեր, չգիտեմ, գուցե ես ներեի, մոռանայի, բայց ինքն իմ երկրին վիրավորեց, այն երկրին, որի համար ես պատերազմել եմ, կռվել, հիմա իմ հողում հայհոյում են, վիրավորում: Գուցե ես վերջին հայրենասերն եմ, բայց ես պահանջում եմ, որ նա պատասխան տա իր խոսքերի համար»:

Զաքարյանը պատմում է, որ իրեն ոստիկանության եւ դատախազության աշխատակիցներն ասել են, որ չեն ցանկանում միջոցներ ձեռնարկել Աբուլֆազլ Ղոլամ Հասան Դոլացխահիի դեմ, քանի որ չեն ցանկանում Հայաստանի եւ Իրանի բարիդրացիական հարաբերությունները փչացնել: «Սակայն ես համոզված եմ, որ կան նաեւ այլ պատճառներ: Աբուլֆազլ Ղոլամ Հասան Դոլացխահին ըմբշամարտիկ է եւ ոստիկանությունում ասել է, որ իր թիկունքում կանգնած է անձամբ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը», հիշում է Ժաննա Զաքարյանը:

Թեպետ քրեական գործ պետք է հարուցվեր ՔՕ 113-րդ հոդվածի 7-րդ կետով՝ ոչ միջին ծանրության մարմնական վնասվածքների պատճառում ազգային, ռասայական, կրոնական ատելության եւ կրոնական մոլեռանդության հողի վրա, որի համար սահմանված առավելագույն պատիժը 5 տարի է, սակայն հարուցվել է գործ ՔՕ 117-րդ հոդվածի հատկանիշներով՝ խուլիգանություն:

Քրեական գործն այժմ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում է: Դատավորը Մխիթար Պապոյանն է: Գործի շրջանակներում կայացել է դատական երեք նիստ: Հարցաքննվել են վկաները, ոստիկաններն ու մեղադրյալը: Վկաները հաստատել են նախաքննության ժամանակ իրենց տված ցուցմունքը, մեղադրյալը չի ընդունել իր մեղքը: Ժաննայի խոսքերով՝ դատական նիստերի ընթացքում թարգմանիչն ուղղորդված էր ի նպաստ մեղադրյալի, բացի դրանից՝ վկաների ցուցմունքից հետո Պապոյանը մոտ 30 րոպե փակվել է վկաների հետ դատասենյակում: «Զրույցից հետո վկաներն ասում էին, որ Մխիթար Պապոյանը նրանց ասել է, որ հրաժարվեն ցուցմունքից, ինձ էլ համոզեն, որ հրաժարվեմ իմ դիմումից: Աբսուրդն այն է, որ մենք ուրիշներից պահանջում ենք, բայց ինքներս չենք հարգում մեզ: Ֆրանսիայում օրենք են փորձում ընդունել, որ Ցեղասպանությունը չընդունողը պատժվի, իսկ մեր երկրի ներսում թույլ ենք տալիս, որ ասեն, թե լավ են արել, որ մեզ կոտորել են, ու դա ներվի՞: Ոչ, ես պայքարելու եմ մինչեւ վերջ»:

Դատական հաջորդ նիստը կկայանա ապրիլի 3-ին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Տեղի է ունեցել Սարգսյան-Պուտին հանդիպումը

*1-ին էջից*

Մենք առաջին տեղն ենք զբաղեցնում նաեւ Հայաստանում օտարերկրյա ներդրումների առումով՝ ավելի քան 3 մլրդ դոլար, եւ այս գործընթացը շարունակվում է: Մենք ունենք մեծ, հեռանկարային, լավ ներդրումային համատեղ ծրագրեր: Հույս ունեմ, որ մենք այսօր հնարավորություն կունենանք այս ամբողջի մասին խոսելու: Պակաս ակտիվորեն չեն զարգանում մեր կապերը քաղաքական ոլորտում: Մենք փոխգործակցություն ենք իրականացնում գրեթե բոլոր ոլորտներում ու բոլոր ուղղություններով՝ ե՛ւ խորհրդարանների, ե՛ւ կառավարությունների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների գծով: Այդ ամենը շատ լավ նախադրյալներ է ստեղծում մեր հարաբերությունների ամրապնդման համար, առաջին հերթին՝ մարդկանց միջեւ, հումանիտար ոլորտում: Այստեղ կարեւոր դեր են խաղում Ռուսաստանի Դաշնությունում ապրող հայկական սփյուռքի միավորումները: Մեզ մոտ հայեր շատ կան, Դուք գիտեք: Նրանք մեր երկրի օրինավոր եւ արդյունավետ աշխատող քաղաքացիներ են եւ շարունակում են շատ սերտ կապեր պահպանել իրենց պատմական հայրենիքի հետ: Դա, իհարկե, մեզ միավորող լրացուցիչ մարդկային ներուժ է: Ես շատ ուրախ եմ Ձեզ տեսնել: Բարով եք եկել»,-ՀՀ նախագահի հետ հանդիպման սկզբում ասել է ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինը**:

ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**, շնորհակալություն հայտնելով գործընկերոջը՝ հրավերի, շնորհավորանքի եւ ջերմ խոսքերի համար, միանգամայն օրինաչափ է համարել ընտրություններից հետո իր առաջին արտերկրյա այցը Ռուսաստանի Դաշնություն՝ ընդգծելով, որ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական գործընկերն է, դաշնակիցը եւ դրանով, սկզբունքորեն, ամեն ինչ ասված է:

«Անցած տարին մեզ համար հոբելյանական էր. մենք նշում էինք մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակը: Այդ ժամանակահատվածում մենք անցել ենք շատ լավ ճանապարհ եւ հասել ենք բացառիկ արդյունքների բոլոր ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության մեջ, ռազմական ոլորտում, հումանիտար եւ ինտեգրացիոն գործընթացներում: Դրա համար էլ մենք համարում ենք. լավ է, որ կուտակել ենք՝ պետք է զարգացնել:

Վլադիմիր Վլադիմիրի, ցանկանում եմ հատուկ շնորհակալություն հայտնել մեր վերջին հանդիպումից հետո ռազմական ոլորտում լավ առաջընթացի համար: Մեզ մոտ այցերով եղել են ՌԴ պաշտպանության նախարարը եւ գլխավոր շտաբի պետը: Հայ հասարակությունը շատ բարձր գնահատեց, որ ՌԴ պաշտպանության նախարարը Հայաստան այցելեց Հայկական բանակի օրը: Ես համաձայն եմ Ձեզ հետ, որ առաջընթաց կա նաեւ տնտեսության մեջ: Իհարկե, այստեղ հարցեր կան, եւ մենք ակնկալում ենք Ռուսաստանի օգնությունն ու աջակցությունը», ասել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ վերահաստատելով ՌԴ նախագահին ուղղված Հայաստան պետական այցի իր հրավերը:

ORANGE-Ի ՄԱՐԶԱՅԻՆ ՄԵԿՆԱՐԿԸ

# Մեկնարկում է անվճար ակնաբուժական ծառայությունների 2013թ. ծրագիրը

## *Հայկական ակնաբուժության նախագծի եւ Orange հիմնադրամի կողմից*

**Կոտայքի մարզով մեկնարկում է Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) եւ Orange Հիմնադրամի 2013 թ. ծրագիրը, որի նպատակն է ՀՀ մարզերի բնակիչների համար անցկացնել անվճար ակնային զննումներ եւ իրականացնել բուժումներ սոցիալապես անապահով անձանց համար:**

**Ծրագիրն անցկացվում է երկու փուլով: Առաջին փուլում բժիշկ մասնագետները կզննեն տվյալ բնակավայրում բոլոր ցանկացողներին, որից հետո այն սոցիալապես անապահով բնակիչները, ում մոտ կհայտնաբերվեն վիրահատական միջամտություն պահանջող խնդիրներ, կուղեգրվեն աչքի շարժական հիվանդանոց՝ անվճար բուժումը ստանալու համար: Նրանք, ովքեր ակնոցի կարիք կունենան, կստանան նաեւ հատուկ իրենց համար պատրաստված ակնոց: Կոտայքի մարզում ակնային զննումները կիրականացվեն Նաիրիի շրջանում մինչեւ մարտի 19, մարտի 20-ից ապրիլի 2-ը՝ Կոտայքի շրջանում, եւ ապրիլի 3-ից 16-ը՝ Հրազդանի շրջանում: Ավելի ուշ աչքի շարժական հիվանդանոցը կկայանի Եղվարդում, Աբովյանում, Չարենցավանում եւ Հրազդանում: Մանրամասների համար մարզի բնակիչներին անհրաժեշտ է դիմել իրենց բնակավայրի առողջության կենտրոն եւ հետեւել այնտեղ փակցված հայտարարություններին կամ զանգահարել 010559068: Նախատեսվում է, որ մարզում ակնային զննումներ կանցնեն շուրջ 4000 բնակիչներ, կիրականացվի շուրջ 300 վիրահատություն, կտրամադրվի մոտ1500 ակնոց: Մարզի ինը դպրոցներում ակնային զննումներին զուգահեռ կանցկացվեն նաեւ ակնային խնամքի հանրակրթական դասընթացներ երեխաների համար: Ամբողջական ժամանակացույցը կարելի է բեռնել ինտերնետից. http://goo.gl/CB63g**



**«Հայկական ակնաբուժության նախագծի հետ միասին անցյալ երկու տարիներին իրականացրած մեր աշխատանքի շնորհիվ տասնյակհազարավոր մարդկանց ենք կարողացել օգնել: Մեծ ուրախությամբ ենք մեկնարկում 2013թ. ծրագիրը, որը թույլ է տալու նաեւ նոր մարզեր այցելել եւ իրական փոփոխություն բերել շատ մարդկանց ու ընտանիքների կյանքում: Կոչ ենք անում բոլորին այցելել անվճար ակնային զննման, քանի որ որքան շուտ հայտնաբերվի խնդիրը, այնքան ավելի մեծ հավանականություն կլինի այն կանխելու կամ վերացնելու համար»,- ասաց Orange Հիմնադրամի գլխավոր քարտուղար Նազարեթ Սեֆերյանը:**

**«Գրանցված արդյունքները փաստում են , որ ՀԱՆ-ի եւ Orange Հիմնադրամի համագործակցությունը ձեռք է բերում զգալի նշանակություն ՀՀ բնակչության ակնային առողջության պահպանման գործում: Մենք ուրախ ենք, որ մեր համագործակցությունը կրում է երկարատեւ եւ շարունականան բնույթ, ինչը թույլ է տալիս ասել, որ ՀՀ բնակչությանը մատուցվող ակնաբուժական ծառայությունների որակը եւ ստացված արդյունքները բարձր են գնահատվում: Այս տարի ՀԱՆ-ը կայցելի Կոտայք, Տավուշ, Լոռի, Շիրակ: Ընդհանուր առմամբ այս չորս մարզերում նախատեսում ենք հետազոտել շուրջ 18000 մարդու, անցկացնել շուրջ 1200 վիրահատություններ եւ լազերային բուժումներ եւ տրամադրել մոտ 6200 ակնոց: Իհարկե, բոլոր նշված ծառայությունները լինելու են անվճար»,- ասաց ՀԱՆ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Նունե Եղիազարյանը:**

**2013 թվականի ծրագրի իրականացման համար Orange Հիմնադրամը տրամադրում է 26500000 դրամ:**



**Հիշեցնենք, որ ՀԱՆ-ի եւ Orange Հիմնադրամի 2011 - 2012 թթ. համատեղ ծրագրերի արդյունքում Հայաստանի 6 մարզերում՝ Արագածոտնում, Շիրակում, Սյունիքում, Վայոց Ձորում, Արարատում եւ Արմավիրում անվճար բժշկական ծառայություններից արդեն օգտվել են 23364 մեծահասակներ եւ 5783 երեխաներ: Աչքի շարժական հիվանդանոցում խորացված հետազոտություն են անցել 3055 բնակիչներ, որոնցից 1900-ն ստացել են անվճար վիրահատություններ եւ լազերային բուժումներ: Դուրս է գրվել 10939 ակնոց: ՀՀ մարզերի 36 դպրոցներում 1944 երեխաներ մասնակցել են աչքի խնամքի հանրակրթական դասընթացների:**

# «Զորյան ինստիտուտը»՝ հանուն ճշմարտության եւ մարդու իրավունքների պաշտպանության

Ամփոփելով 2012 թվականի գործունեությունը, Կանադայում գործող «Զորյան ինստիտուտը» արդարացի գոհունակությամբ նշում է իր զեկուցագրում, որ տարին շատ արդյունավետ է եղել: Հրատարակվել է հինգ գիրք (երեք լեզուներով) եւ երկու ակադեմիական մակարդակի պարբերականներ: Շարունակվել են համալսարանական կրթական ծրագրերը, որոնց մասնակցել են տասից ավելի երկրների ուսանողներ, եւ խորաթափանց դասախոսությունները ճշմարտության բացահայտման եւ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ:




Հրատարակված գրքերի շարքում են.

ա) Լրագրող Սամվել Շահմուրադյանի «Սումգայիթի ողբերգությունը» հատորի իտալերեն տարբերակը, որին «**Ազգը**» անդրադարձել է մարտի 1-ի իր համարում: «La Tragedia Di Sumgait: 1988, Un pogrom dí armeni nelĺ Unione Sovietica» գիրքը հրատարակության է պատրաստել Պիետրո Քյուչուքյանը, իսկ լույս է ընծայել Միլանի «Guerini e Associati» հրատարակչատունը:

բ) «Զորյանի» գործադիր տնօրեն Ջորջ Ն. Շիրինյանի խմբագրությամբ լույս տեսած «Փոքր Ասիայի աղետը եւ օսմանյան հույների ցեղասպանությունը» (The Asia Minor Catastrophe and the Ottoman Greek Genocide: Essays on Asia Minor, Pontos and Eastern Thrace, 1913-1923) գիրքը, որը պարունակում է Չիկագոյի «Փոքր Ասիայի եւ Պոնտոսի հելլենական հետազոտությունների կենտրոնի» կազմակերպած երկու ակադեմիական գիտաժողովների ընթացքում կարդացված զեկուցումները՝ միջազգային ճանաչման արժանացած գիտնականների կողմից: Հատորը առաջին անգամ համեմատական վերլուծության է ենթարկում հայերի, ասորիների եւ հույների դեմ գործված ցեղասպանությունները:

գ) Հայտնի գրող Ռիֆաթ Բալիի գրքի թարգմանությունը «Պետության տիպար քաղաքացիները: Թուրքիայի հրեաները բազմակուսակցական ժամանակաշրջանում» (Model Citizens of the State: The Jews of Turkey during the Multi-Party Period) խորագրով: Հատորը փաստերի ուսումնասիրությամբ ցույց է տալիս, թե ինչպես «ռեալպոլիտիկը» խաթարում է ճշմարտությունը, եւ ուժեղը նպաստում մարդու իրավունքների խախտմանը: Թուրքիայի Հանրապետության առաջին տասնամյակներում հրեաները նույնպես հալածվում էին, ինչպես մյուս փոքրամասնությունները: 1970-ականներին պատկերը փոխվեց, երբ նրանք եւ ամերիկացի հրեաները սկսեցին համագործակցել Թուրքիայի հետ մի շարք, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարելու, հարցերում:

դ) Հայտնի հրատարակիչ Զարաքոլուի ջանքերով լույս տեսած Վոլֆգանգ Գուստի կազմած եւ խմբագրած «Հայոց ցեղասպանությունը 1915-16 թթ.: Փաստաթղթեր գերմանական արտգործնախարարության քաղաքական արխիվներից» հատորի թուրքերեն թարգմանությունը: Գրքում զետեղված ավելի քան 200 հեռագրերը, նամակները ու զեկուցումները՝ Օսմանյան կայսրությունում գործող գերմանական հյուպատոսարանից՝ Բեռլինի արտգործնախարարություն, ջախջախիչ մեղադրանքներ են՝ ուղղված ինչպես թուրքական, այնպես էլ գերմանական վարքագծի դեմ:

ե) Պրոֆեսորներ Վահագն Տատրյանի եւ Թաներ Ակչամի համահեղինակությամբ լույս ընծայված «Դատավարություն Ստամբուլում» (Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials) հատորը՝ առաջին անգամ անգլերեն լեզվով ներկայացված արեւմտյան ընթերցողին:

Բացի այս գրքերից՝ «Զորյան» ինստիտուտը շարունակել է հրատարակել իր երկու հանդես-պարբերականները՝ «Diaspora: A Journal of Transnational Studies» եւ «Genocide Studies and Prevention» խորագրերով: «Սփյուռք» եւ «Ցեղասպանության ուսումնասիրություններ եւ կանխարգելում» հանդեսները լույս են տեսնում տարեկան երեք անգամ:

Հրատարակություններից որեւէ մեկը ձեռք բերելու համար անհրաժեշտ է այցելել «zoryan@zoryaninstitute.org» կայքը:

Ինստիտուտի հաշվետվությունը նաեւ նշել է, որ անցյալ տարվա օգոստոսին 22 ուսանողներ Հայաստանից, Բելգիայից, Բրազիլիայից, Կանադայից, Գերմանիայից, Թուրքիայից եւ Մ. Նահանգներից ավարտել են «Ցեղասպանություն եւ մարդու իրավունքներ» համալսարանական ծրագիրը, որն արդեն 11 տարի գործում է: Անցյալ տարվա կուրսը վարել է պրոֆ. Ջոյս Ապսելը:

Իսկ նոյեմբերին «Օրրան» ոչ կառավարական կազմակերպության հիմնադիր, Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի իրավագիտության ամբիոնից Արմինե Հովհաննիսյանը դասախոսություն է կարդացել Բոստոնի համալսարանում երեխաների, այդ թվում՝ հաշմանդամ, իրավունքների պաշտպանության թեմայով, վեր հանելով Հայաստանում այդ հարցի առնչությամբ գոյություն ունեցող խնդիրները:

«Զորյան» ինստիտուտը գործադրում է հսկայական ջանքեր՝ պատրաստելու համար ցեղասպանության եւ մարդու իրավունքների ճանաչման գործում գիտնականների նոր սերունդ եւ առիթից օգտվելով շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր բարոյական եւ նյութական աջակցություն են ցուցաբերում հասարակությանը», նշված է զեկուցագրի ավարտին:

Հ. Ծ.

# Սիրիացի ապստամբները սպառնում են Իսրայելին

## *«Մենք կազատագրենք Գոլանը»*

Սիրիական ընդդիմության զինված ջոկատները համացանցում տեղադրել են տեսահոլովակ, որտեղ Բաշար Ասադին քննադատում են Իսրայելի դեմ պայքարից հրաժարվելու համար: Նրանք խոստանում են, որ նրա տապալումից հետո իրենց զենքը կուղղեն «սիոնիստ թշնամու» դեմ:

«40 տարի առաջ դավաճան Հաֆեզ Ասադը Գոլանի բարձունքները վաճառեց Իսրայելին: Այդ հողերը թանկ են Ալլահի համար, եւ Ասադների անիծյալ գերդաստանը խոստացել էր ազատագրել դրանք, բայց 40 տարում ոչ մի կրակոց չհնչեց: Մենք պատերազմ կծավալենք Իսրայելի դեմ եւ կանենք այն, ինչ Ասադը չկարողացավ անել՝ կազատագրենք Գոլանը», հայտարարել է ընդդիմության ներկայացուցիչը:

Իսրայելական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Բենի Գանցը Հերցլիայում երեկ կազմակերպված մամլո ասուլիսում Սիրիայի իրադրությանն անդրադառնալով հայտարարել է, որ Ասադի վարչակարգի դեմ մարտնչող ահաբեկչական խմբավորումները կարող են իրենց զենքն ուղղել Իսրայելի դեմ: Գեներալն ասել է, որ Սիրիայի իրավիճակը խիստ վտանգավոր է հարեւան երկրների համար: Միեւնույն ժամանակ Գանցը նշել է, որ Իսրայելի բանակը ի վիճակի է չեզոքացնելու երկրին սպառնացող ամեն մի վտանգ, այդ թվում՝ «Հզբոլլահից» բխող վտանգը:

Իսրայելի ԱԳՆ ներկայացուցիչ Իգալ Պալմորը թուրքական «Հյուրիեթ» թերթին տված հարցազրույցում երկյուղներ է արտահայտել Սիրիայի հնարավոր տրոհման կապակցությամբ: «Հուսով ենք՝ պատերազմը շուտ կավարտվի, եւ իշխանությունը կանցնի ուժեղ կենտրոնական կառավարությանը», ասել է նա:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ-ԱՐԳԵՆՏԻՆԱ

# Ֆոլքլենդները քվեարկեցին կարգավիճակի պահպանման օգտին




**Ֆոլքլենդյան կղզիների բնակիչները անցկացված հանրաքվեի ժամանակ քվեարկել են Մեծ Բրիտանիայի անդրծովյան տարածքի կարգավիճակի պահպանման օգտին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Երկու օր տեւած հանրաքվեի ընթացքում կղզիների ներկա իրավիճակի պահպանման օգտին արտահայտվել է բնակչության 98,8 տոկոսը: Դեմ է քվեարկել 3 մարդ: Քվեարկությանը մասնակցել է 1672 ընտրողների 92 տոկոսը:**

**Տարածքի քաղաքական կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե նախաձեռնել էր տեղական կառավարությունը, որպեսզի ապացուցի կղզիների պատկանելությունը վիճարկող Արգենտինայի տարածքային պահանջների հիմնազրկությունը:**

**Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը ողջունել է հանրաքվեի արդյունքները, ասելով, որ 21-րդ դարում պետք է պահպանվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը:**

**Մինչդեռ Բուենոս Այրեսում կարծում են, որ Ֆոլքլենդներում անցկացված հանրաքվեն օրինական ուժ չունի»: «Մենք հարգում ենք բրիտանացի մնալու ֆոլքլենդցիների ցանկությունը, բայց նրանց բնակության տարածքը Մեծ Բրիտանիային չի պատկանում», հայտարարել է Լոնդոնում Արգենտինայի դեսպան Ալիսիա Կաստրոն:**

# Նյու Յորքի դատարանը վերացրեց գազավորված քաղցրաջրի վաճառքի սահմանափակումը




Նյու Յորքի դատարանը չեղյալ է հայտարարել մեծ տարաներով գազավորված քաղցրաջրի վաճառքի արգելքը, որը քաղաքի իշխանությունները սահմանել էին 2012-ի սեպտեմբերին: Լոնդոնի «Գարդիան» թերթը նշում է, որ դատարանը քաղաքապետարանի ընդունած որոշումը բնութագրել է իբրեւ «ընտրողական եւ հիմնազուրկ»:

Քաղաքապետ Մայքլ Բլումբերգը, սակայն, հայտարարել է, որ կշարունակի նման արգելքի հաստատմանն ուղղված պայքարը եւ կգանգատարկի դատավճիռը:

Նրա խոսքերով, 0,473 լիտրից մեծ տարողության բաժակներով ու շշերով գազավորված քաղցրաջրի վաճառքը հանգեցնում է դրա անվերահսկելի սպառմանը եւ, իբրեւ հետեւանք, բնակչության ճարպակալմանը: Ի դեպ, արգելքը վերաբերում էր միայն փողոցային առեւտրին, կինոթատրոններին եւ հասարակական սննդի ձեռնարկություններին, իսկ խանութներում ըմպելիքը կարելի էր գնել ամեն ծավալի տարաներով:

Դատարանը կարծում է, որ նման ընտրողականությունը կհանգեցնի արգելքի գիտակցված եւ ականամտական խախտումների: Բացի դրանից, քաղաքապետը չի արգելել բաժակը կրկին լցնելու լայնորեն տարածված սովորույթը, ինչը անհեթեթ է դարձնում ծավալների սահմանափակումը:

Գազավորված ըմպելիքի վաճառքի սահմանափակման շարժառիթները պարզաբանելիս Բլումբերգը հայտարարել է, որ դա պետք է լինի ավելի վաղ հասարակական վայրերում հաստատված ծխելու արգելքի պես մի բան:

«Գարդիանը» նշում է, որ երկարատեւ դատական քննությունը կարող է ձախողել ճարպակալման դեմ պայքարելու քաղաքապետի ծրագրերը: 2013-ի դեկտեմբերին Բլումբերգի պաշտոնավարման ժամկետն ավարտվում է, իսկ նրա հավանական իրավահաջորդ Քրիստին Քուինն արդեն հայտարարել է, որ ինքը չի պայքարելու «մեծ տարողության բաժակների» դեմ:

# «Սփիւռքի ձայն» հեռուստածրագրի տարեդարձի նշում եւ մեծարանք երեք ծանօթ ազգայիններու

Մեծագոյն Նիւ Եորքի պայմաններու տակ գիտենք, որ դիւրին աշխատանք չէ հեռուստածրագրի մը նախաձեռնութեան լծուիլ ու շարունակել զայն աննահանջ հաւատքով: Տնտեսական ներկայ անապահով պայմաններու տակ եւ նիւեորքեան տարածային այս ոստանի դժուարութիւնները նկատի ունենալով, գործին նկատմամբ ամուր հաւատք եւ գերմարդկային ճիգ կ'ենթադրուի ունենալ:

Տնօրէնուհին՝ Կարինէ Քոչարեանի մօտ քսանամեայ բնակութիւնը մեր քաղաքին մէջ տուաւ իրեն լայն փորձառութիւն ճանչնալու համայնքը իր բոլոր խաւերով ու երեսներով, վերջապէս ճանչնալու մեր հաստատութիւնները եւ ազգայինները: Դիւրին չէ երբեք համագործակցութիւն մը ապահովել կառոյցներու միջեւ եւ շաղկապել զանոնք մէկ պաստառի մէջ: Կարինէի հաղորդական նկարագիրը, ինչպէս նաեւ արուեստներու նկատմամբ ունեցած լայն հետաքրքրութիւնն ու համակ սէրը դարձան առաւելութիւն հեռուստածրագրի որակաւոր ու բարի երթին:

Ողջոյնի իր գիրը ղրկած էր ՀՀ Սփիւռքի նախարարը՝ Տիկին Հրանուշ Յակոբեան:

Օրհնութեան եւ ողջոյնի գիրեր եկած ու գեղեցիկ յայտագիր գրքոյկին մէջ տեղադրուած էին Խաժակ Արք. Պարսամեանէ, Օշական Արք. Չօլոյեանէ, ՀՀ ՄԱԿի մօտ հաւատարմատար Կարէն Նազարեանէ, ՀՅԴ եւ ՌԱԿ կուսակցութիւններէն, Համազգային եւ Թէքէեան մշակութային միութիւններէն:

Մարտ 2-ին Նիւ Ջըրզիի «Փալիսետիում» սրահը լեցուցեր էին մօտ 250 ազգայիններ: Սրահը տօնական օրուան մը երեւոյթը ստացած էր. ամէն շրջանակէ, դաւանանքէ, գաղափարական դպրոցէ հայորդիներու համար առիթ մը ստեղծուեցաւ ըլլալու միասին եւ ողջունելու զիրար:

Թէեւ երեկոն նուիրուած էր հեռուստածրագրի երկրորդ տարեդարձին, սակայն ունէր նաեւ հաճելի պարտականութիւն մը մեծարելու երեք ազգային մշակներ՝ կրթական մշակ Զարմինէ Պօղոսեանը, թատերագիր ու բեմադրիչ դոկտ. Հրանդ Մարգարեանը եւ հրատարակագիր ու խմբագիր Յարութ Սասունեանը:

Օրուան հանդիսավարն էր բեմադրիչ եւ լուսանկարիչ Հայկ Քոչարեան: Բացման խօսքով հանդէս եկաւ «Սփիւռքի ձայն» յանձնախումբի ատենապետ բժիշկ Արամ Գազազեանը, որ իր գործընկերներուն հետ միասին ամէն ջանք թափած էր այս ձեռնարկը դարձնելու որակաւոր, ինչպէս նաեւ՝ նիւթապէս շահութաբեր:



Լոս Անճելըսէն «Արմինիա Լայֆ» շաբաթաթերթի խմբագիր Աբօ Չափարեան ներկայացուց իր վաղեմի բարեկամին՝ Յարութ Սասունեանի կատարած խմբագրական ու լրագրական գործը:

ՀԲԸՄիության Կրթական միջոցառումներու տնօրէնուհին՝ Նաթալի Գաբրիէլեան, ներկայացուց երբեմնի իր ուսուցչուհին՝ Նիւ Եորքի սրբոց Նահատակաց ամէնօրեայ վարժարանի տնօրէնուհին՝ տիկին Զարմինէ Պօղոսեանը, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած մեծարանքին համար:

Իսկ երրորդը՝ համայնքիս ծանօթ ազգայիններէն ճարտարագէտ ու մանկավարժ Յարութիւն Մըրըլեան ներկայացուց թատերագիր, բեմադրիչ ու հասարակական գործիչ դոկտ. Հրանդ Մարգարեանը: Անոնց ծանօթութիւնը կու գայ դեռ ծննդավայր Իրաքէն: Հայ բեմի յարգելի վարպետը եւս տուաւ իր սրտի խօսքը:

Կ'արժէ, անշուշտ, երկար արտայայտուիլ իւրաքանչիւրին մասին, որոնք տասնամեակներու վրայ երկարող վաստակ մը ունին հայ կեանքէն ներս: Իւրաքանչիւրը անոնցմէ ստացաւ յուշանուէր մը յանձնախումբին անունով:

Քաղաքիս արուեստաբաններէն տիկին Շողակ Յովհաննէսեան եւս արտայայտուեցաւ «Սփիւռքի ձայն»ի կատարած ներդրումին մասին:

Յուսկ խօսք առաւ տնօրէնուհին՝ տիկին Կարինէ Քոչարեան, որ բեմական իր լայն վարժութեամբ առինքնեց ներկաները իր սրտի խօսքով:

Քանադայէն Էլի Պերպերեան եւ նուագախումբը, պաշտօնական յայտագիրէն ետք, հրաւիրեցին ներկաները հայկական աւանդական պարի:

Առանձնապէս կ'արժէ շնորհաւորել բովանդակալից յայտագիրը կազմող Ալեքս Սարաֆեանը, «անձայն աճուրդ»ը կազմակերպող Լուսին Ճըճըրեանը, ճաշկերոյթը իր բարձրագոյն խնամքին բերող Կարինէ Աբրահամեանը, Մակի Հաժժարը, Մէյրիլինտա Պոզեանն ու Մարգրիտ Տաղաւարեան-Ղազարեանը:

Վերջապէս, կարեւոր ներդրում մը կը նկատենք նաեւ այս հեռարձակումը, որով հայրենի մշակութային կեանքի զանազան երեսները կը հրամցուին իւրաքանչիւր յայտագրի աւարտին, հանդիսանալով ոսկի կամուրջ մը Սփիւռքի եւ Հայրենիքի միջեւ:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք

«ՆԱՐԵԿԱՑԻ» ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

# Հայ մշակույթի իրական հնարավորությունները. ներկայացնում է «Անտրակտը»

«Անտրակտ» գործակալությունը «Նարեկացի» արվեստի միությունում ներկայացրեց հայկական երաժշտության համերգ: Ելույթ ունեցան գործակալության հետ համագործակցող պրոֆեսիոնալ խմբեր ու անհատ կատարողներ:

«Անտրակտը» տուրիստական գործակալությունների եւ ծառայություն մատուցող կազմակերպությունների համար մշակում է մշակութային եւ ինտերակտիվ հատուկ ծրագիր, որտեղ հայ մշակույթը կներկայանա բազմակողմանիորեն: Ներկայացնում է հայ լավագույն դասական, հոգեւոր, ժողովրդական եւ էստրադային երաժշտությունը, ազգային տոները, ծեսերն ու ավանդույթները, ինտերակտիվ խաղերի միջոցով փոխանցում է պատմական գիտելիքներ, ինֆորմացիա՝ հայ ժողովրդի պատմության այս կամ այն իրադարձության մասին: Գործակալությունն ունի պրոֆեսիոնալ երաժիշտներից, պարողներից եւ դերասաններից բաղկացած ամբողջական կազմ, համագործակցում է նաեւ պատմաբանների եւ ազգագրագետների հետ:

Օպերային երգչուհի, խմբավար, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոս, Վիեննայի կամերային օպերային թատրոնի մեներգչուհի, հանրապետական եւ միջազգային մրցույթների դափնեկիր Լուսինե Ազարյանն է հիմնել այս գործակալությունը: Լուսինեն պատահաբար հայտնվելով տուրիզմի ոլորտում՝ նկատել է, որ հայ մշակույթը պատշաճ կերպով ներկայացված չէ, եւ ուսումնասիրելով հանրապետության գրեթե ողջ երաժշտական դաշտը, փորձել է գտնել լավագույններին ու պրոֆեսիոնալներին:

«Մենք ունենք հարուստ մշակութային ավանդույթներ եւ տաղանդավոր արվեստագետներ, որոնք լիովին կարող են ներկայացնել մեր տեսակը: Հայ արվեստագետի պատվի զգացումն ինձ ստիպեց ստեղծել այս ամենը»,- ասում է Լուսինեն:

«Նարեկացի» արվեստի միությունում «Անտրակտը» ներկայացրեց հայ երաժշտության գրեթե բոլոր ժանրերը՝ դասական, հոգեւոր, ժողովրդական, գուսանական, էստրադային, ջազային եւ այլն: Համերգի նպատակն էր ներկայացնել հայ մշակույթի իրական հնարավորություններն ու ուժերը:

Ելույթ ունեցան դափնեկիրներից կազմված «Վարդանյան» լարային քառյակը, օպերային թատրոնի մեներգիչ Պերճ Գարազյանը, ժողովրդական երգիչ Էդգար Խաչատրյանը, «Արեգ» ժողգործիքների համույթը, «Լուսնակ» վոկալ համույթը, «Դուդուկներ» համույթը եւ այլք: Համերգի վերջում արտիստները հանդիսատեսի օգնությամբ բեմադրեցին հայ ավանդական հարսանիքը՝ համապատասխան երգ ու պարով, ծիսական արարողակարգով, որին մասնակցեց նաեւ «Նարեկացի» արվեստի միության հիմնադիր տնօրեն Նարեկ Հարությունյանը:

- Ես շատ տպավորված եմ... Լուսինեն, ինչպես «Նարեկացի» արվեստի միությունը, ուխտ է արել ծառայելու մշակույթին: Մենք տեսանք ամենաբարձր մակարդակի երաժիշտներ եւ արվեստագետներ: «Նարեկացի» արվեստի միությունը միանում է ձեզ... մենք ձեր կողքին ենք՝ մեր բոլոր հնարավորություններով, - ասաց Նարեկ Հարությունյանը՝ հյուրերին նվիրելով «Նարեկացիի» խորհրդանշական նվերները:

*«Նարեկացի» արվեստի միություն*

# Թվայնացվում է Հայաստանի ազգային գրադարանը

**Հայաստանի ազգային գրադարանը թվայնացնում է իր ողջ ֆոնդը: Առ այսօր թվայնացվել է 550-ից ավելի գիրք: Ընդգծենք, որ դեռեւս 6.5 միլիոն քանակությամբ գրքային ֆոնդ կա, ինչի թվայնացումը տարիների աշխատանք է պահանջում: Տարվա ընթացքում 300-ից ավելի գիրք է թվայնացվում: Իսկ գրքի յուրաքանչյուր էջը թվայնացնելու համար պահանջվում է մոտ 20 րոպե: Թվային գրադարան ստեղծելու աշխատանքներում առաջնությունը տրվել է 1512-1800 թվականներին ստեղծված հայ հնատիպ գրքին, ինչպես նաեւ հատուկ ուշադրություն է դարձվում հայագիտական գրականության թվայնացմանը: 1512-1920թթ. շտեմարաններում տեղադրված թվայնացված գրքերը մոտ 1100 անուն են:**

**Գրադարանը բաց է ամեն օր եւ օրական շուրջ 900 ընթերցող է այցելում: Թվայնացման աշխատանքները սկսվել են դեռեւս 2011թ-ից:**

# Գեղարվեստի ակադեմիայում տեղի ունեցավ «Արվեստանոց» ճեպանկարի ցուցահանդեսի բացումը

**Երեկ՝ մարտի 11-ին Գեղարվեստի ակադեմիայի «Ալբերտ եւ Թովէ Բոյաջյան» ցուցասրահում տեղի ունեցավ«Արվեստանոց» ճեպանկարների ցուցահանդեսի հանդիսավոր բացումը, որտեղ ներկայացված էին գրաֆիկայի բաժնի 3-րդ եւ 4-րդ կուրսերի ուսանողների դասախոս՝ Աննա Ավետիսյանի աշխատանքները:**

**Բացման ու ողջույնի խոսքով ելույթ ունեցավ ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանն, որ ողջունեց բոլոր ուսանողներին՝բարի երթ մաղթելով նրանց արվեստի դժվարին աշխարհ:**

**Այնուհետեւ խոսք տրվեց ակադեմիայի դեկան Էդուարդ Վարդանյանին, որ նույնպես շնորհավորեց բոլորին ու հույս հայտնեց ,որ նմանատիպ ցուցահանդեսները կրելու են շարունակական բնույթ:**

**Վերջում խոսեց գրաֆիկայի բաժնի դասախոս ու ղեկավար Աննա Ավետիսյանը, որ շնորհակալություն հայտնեց բոլորին ցուցահանդեսին ներկա գտնվելու համար ու հույս հայտնեց, որ մոտ ապագայում կշարունակվեն նմանատիպ ցուցահանդեսները:**

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# «Չբացահայտված Օձուն» ֆիլմաշարը՝ Ազգային կինո

**«Հայկական կինոյի զարթոնք» կինոկենտրոնի խորհուրդը «Ազգային կինո» մրցանակ է շնորհել «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամի պատվերով նկարահանված «Չբացահայտված Օձուն» ֆիլմաշարին՝ հայկական ճարտարապետության այդ գլուխգործոցը բացահայտելու, հանրամատչելի ներկայացնելու, քրիստոնեական արժեքն ու ոգին հաշված րոպեների ընթացքում հիանալիորեն փոխանցելու համար:**

**«Չբացահայտված Օձուն» ֆիլմաշարի սերիաներից մեկը կարելի է դիտել հետեւյալ հղումով.**

**http://www.youtube.com/watch?v=Azt7QVVwHUA**

ԱՐՄԵՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ
«Հայկական կինոյի զարթոնք կինոկենտրոն»
ՀԿ նախագահ

ВТБ

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ հայտարարում է 2013թ. ընթացքում թղթադրամ, մետաղադրամ հաշվող ինչպես նաեւ դրամ ստուգող եւ տեսակավորող սարքավորումների պահանջարկը բավարարելու նպատակով մատակարար կազմակերպություններ ընտրելու բաց մրցույթ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ–Հայաստան Բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան շ. 46 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2013թ. Ապրիլի 12-ը, ժամը 17:00 ներառյալ:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2013թ. Ապրիլի 15 -ին , ժամը17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մրցութային կոմիտե,

Հասցեն՝ՀՀ, ք. Երեւան, 0010, Նալբանդյան շ. 46,
Կոնտակտային անձ՝
Լուսինե Սուսանյան
Հեռ. +(37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ **l.susanyan@vtb.am**
Հեղինե Մելքումյան
Հեռ. (+37410) 51-37-16
Էլ. փոստ՝ **h.a.melkumyan@vtb.am**

# Արթուր Դավթյանն ու Անահիտ Թաղեւոսյանը մարմնամարզության ՀՀ չեմպիոններ

Վերջնագիծը հատեց սպորտային մարմնամարզության Հայաստանի մեծահասակների առաջնությունը, որի պարգեւները վիճարկեցին Երեւանի, Գյումրիի եւ Էջմիածնի 60 մարմնամարզիկներ:

Տղամարդկանց մրցումների բազմամարտում իր հավասարը չուներ Արթուր Դավթյանը, որը հռչակվեց հանրապետության չեմպիոն: Արծաթե մեդալը նվաճեց Սերոբ Սողոմոնյանը, բրոնզե մրցանակակիր դարձավ Վահան Վարդանյանը:

Առանձին գործիքների վրա վարժություններում էլ Արթուր Դավթյանն իրեն գերազանց դրսեւորեց: Նա ուժեղագույնը ճանաչվեց ազատ վարժություններում, հենացատկում, պտտաձողի եւ զուգափայտերի վրա կատարած վարժություններում: Նժույգաթափերում լավագույնը Վահագն Ստեփանյանն էր, իսկ օղակների վրա վարժությունում չեմպիոն հռչակվեց Վահագն Դավթյանը:



Աղջիկների մրցավեճում բազմամարտում ոսկե մեդալի արժանացավ Անահիտ Թաղեւոսյանը: 2-րդ արդյունքը ցույց տվեց Անի Թունյանը, իսկ բրոնզե մեդալը նվաճեց Արփինե Թաղեւոսյանը: Առանձին գործիքների վրա վարժություններում Անահիտ Թաղեւոսյանը լավագույնն էր հենացատկում, հավասարակշռության գերանի եւ զուգափայտերի վրա վարժություններում: Ազատ վարժությունում հաղթող ճանաչվեց Անի Թունյանը:

Հայաստանի առաջնության արդյունքներով կձեւավորվեն սպորտային մարմնամարզության հանրապետության հավաքականները, որոնք ապրիլին Մոսկվայում կմասնակցեն Եվրոպայի առաջնությանը:

Առաջնությանը մասնակցեցին նաեւ սպորտային մարմնամարզության Հայաստանի պատանեկան եւ երիտասարդական հավաքականների անդամները: Նրանց ցույց տված արդյունքները հուսադրող են:

# Ուսեյն Բոլտն ու Ջեսիկա Էնիսը տարվա լավագույն մարզիկներն են





Ռիո դե Ժանեյրոյի քաղաքային թատրոնում կայացել է սպորտի համաշխարհային ակադեմիայի ամենամյա մրցանակաբաշխությունը: Աշխարհի լավագույն մարզիկի համար սահմանված մրցանակը ստացել է ճամայկացի արագավազորդ, աշխարհի ռեկորդակիր, օլիմպիական խաղերի չեմպիոն Ուսեյն Բոլտը: Նա անցյալ տարի Լոնդոնում կայացած ամառային օլիմպիադայում չեմպիոն էր հռչակվել 100 ու 200 մ վազքում եւ 4x100 մ փոխանցումավազքում:

Ուսեյն Բոլտը 3-րդ անգամ արժանացավ սպորտի համաշխարհային ակադեմիայի մրցանակին: Այդ պայքարում նրա հիմնական մրցակիցներն էին հեծանվորդ Բրեդլի Ուիգինսը, արգենտինացի ֆուտբոլիստ Լիոնել Մեսին, լողորդ Մայքլ Ֆելպսը, թեթեւատլետ Մո Ֆարան եւ «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելը:

Յոթնամարտում Լոնդոնի օլիմպիադայի չեմպիոնուհի Ջեսիկա Էնիսը ճանաչվել է 2012-ի լավագույն մարզուհի: Բրիտանացի մարզուհին մրցանակի համար պայքարում գերազանցեց թեթեւատլետուհիներ Էլիսոն Ֆելիքսին ու Շելի-Էն Ֆրեյզեր Պրայսին, լողորդուհի Միսի Ֆրանկլինին, թենիսիստուհի Սերենա Ուիլյամսին եւ լեռնադահուկորդուհի Լինդսի Վոնին:

«Տարվա հայտնություն» մրցանակը հանձնվել է բրիտանացի թենիսիստ Էնդի Մարեյին, որն անցյալ տարի հաղթող ճանաչվեց ոչ միայն Լոնդոնի օլիմպիադայում, այլեւ ԱՄՆ-ի թենիսի բաց առաջնությունում: «Տարվա վերադարձ» մրցանակին արժանացավ թեթեւատլետ Ֆելիքս Սանչեսը, որը Լոնդոնում չեմպիոն էր հռչակվել 400 մ արգելավազքում:

Տարվա լավագույն թիմ է ճանաչվել գոլֆի Եվրոպայի հավաքականը, որը դրամատիկ պայքարում նվաճել էր Ռայդերի գավաթը: Լավագույն հաշմանդամ մարզիկի մրցանակը հանձնվել է 2012-ի պարաօլիմպիադայի վեցակի չեմպիոն, բրազիլացի լողորդ Դանիել Դիասին:

Ամերիկացի հանրահայտ լողորդ Մայքլ Ֆելպսը, որն ավարտել է կարիերան, արժանացել է հատուկ մրցանակի սպորտային բացառիկ նվաճումների համար: Նախկին թեթեւատլետ, Լոնդոնի օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Սեբաստիան Կոուն էլ արժանացել է հատուկ մրցանակի սպորտում ունեցած իր ահռելի վաստակի համար:

# Հայ բռնցքամարտիկները կմասնակցեն 3 մրցաշարի

**Բռնցքամարտի Հայաստանի հավաքականի անդամները տարբեր խմբեր կազմած կմասնակցեն միջազգային 3 մրցաշարի: Դրանցից առաջինը մեկնարկում է Չեխիայի Ուստի Նադ Լաբեմ քաղաքում: Այդ մրցաշարում Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Կարեն Ադամալյանի գլխավորությամբ հանդես կգան 5 բռնցքամարտիկներ՝ Նարեկ Աբգարյանը (52 կգ), Արամ Ավագյանը (56 կգ), Արա Պուլուզյանը (64 կգ), Հրայր Մաթեւոսյանը (69 կգ) եւ գերծանրքաշային Արմեն Սիմոնյանը:**

**Միջազգային հաջորդ մրցաշարին՝ մարտի 24-31-ին ուկրաինական Խերսոն քաղաքում կայանալիք ստուգատեսին կմասնակցեն Հովհաննես Բոչկովը (60 կգ), Հովհաննես Դանիելյանը (49 կգ), Արարատ Մխիթարյանը (56 կգ), Վլադիմիր Մարգարյանը (69 կգ), Արման Հովնիկյանը (75 կգ) եւ Ռուսլան Իբրահիմյանը (81 կգ):**

**Բռնցքամարտիկների 3-րդ խումբը՝ Կորյուն Սողոմոնյանը (49 կգ), Դերենիկ Գիժլարյանը (52 կգ), Արթուր Գրիգորյանը (56 կգ), Սամվել Բարսեղյանը (60 կգ) եւ Ազատ Դավթյանը (91 կգ) հանդես կգան մարտի 29-ից ապրիլի 4-ը Ղազախստանում կայանալիք մրցաշարում:**

**Այդ մրցաշարերի մասնակցությունը հնարավորություն կընձեռի հավաքականի բոլոր թեկնածուներին մրցակցային փորձ ձեռք բերելու, ստուգելու նրանց պատրաստվածության աստիճանը: Գրանցված արդյունքների հիման վրա էլ հավաքականի մարզիչները կկազմավորեն թիմը, որը կնախապատրաստվի մայիսի 30-ից հունիսի 9-ը Մինսկում կայանալիք բռնցքամարտի Եվրոպայի առաջնությանը:**

ՖՈՒՏԲՈԼ

# «Փյունիկն» ու «Գանձասարը» կիսաեզրափակիչում են

**Հայտնի դարձան ֆուտբոլի Հայաստանի գավաթի կիսաեզրափակիչի 2 մասնակիցները: Պատվավոր մրցանակի համար պայքարը կշարունակեն «Փյունիկն» ու «Գանձասարը»:**

**«Փյունիկը» գավաթի քառորդ եզրափակիչ պատասխան խաղում «Բանանցի» մարզադաշտի արհեստական խոտածածկով խաղադաշտում հյուրընկալվել էր «Իմպուլսին»: Մրցակիցների առաջին խաղում գրանցվել էր մարտական ոչ-ոքի՝ 2-2: Պատասխան խաղում «Փյունիկը» մեծ առավելության հասավ մրցակցի նկատմամբ՝ հաղթելով 3-0 հաշվով: Արդեն 5-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո փյունիկցի Գագիկ Պողոսյանը գլխի հարվածով բացեց հաշիվը:**

**Հաշիվը հավասարեցնելու «Իմպուլսի» բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Իսկ ահա «Փյունիկը» խաղավերջում 2 անգամ հաջողությամբ ավարտեց հակագրոհները: 81-րդ րոպեին տուգանային հրապարակում ընդունելով գնդակը, Վարդան Բակալյանը գրավեց Գոռ Էլյազյանի պաշտպանած դարպասը: Իսկ ավելացված ժամանակում Կամո Հովհաննիսյանը մենամենակ հայտնվելով դարպասապահի դիմաց, խփեց 3-րդ գոլը:**

**Կիսաեզրափակիչում «Փյունիկը» կմրցի «Գանձասարի» հետ, որը Կապանում 1-0 հաշվով պարտության մատնեց 1-ին խմբի ներկայացուցիչ «Ալաշկերտին»: Հանդիպման ելքը վճռեց 65-րդ րոպեին Նարեկ Բեգլարյանի խփած միակ գոլը: Հիշեցնենք, որ մրցակիցների երեւանյան խաղում դարպասները մնացել էին անառիկ:**

**Այսօր կկայանան քառորդ եզրափակիչի պատասխան մյուս 2 խաղերը: Աբովյանում «Արարատը» կհյուրընկալի Գյումրիի «Շիրակին», որին առաջին խաղում Իջեւանում զիջել էր 0-1 հաշվով: Իսկ «Միկայի» մարզադաշտում կմրցեն «Միկան» եւ «Ուլիսը»: Մրցակիցների առաջին խաղում դարպասները մնացել էին անառիկ:**

# Կառլսենը զգուշանում է Արոնյանից

**«The Guardian» թերթին տված հարցազրույցում Մագնուս Կառլսենը Լոնդոնում մեկնարկող հավակնորդների մրցաշարում իր հիմնական մրցակից է համարել Լեւոն Արոնյանին. «Նա վստահ է իր ուժերին, շատ լավ է պատրաստված, ունակ է հիանալի կողմնորոշվելու ոչ ստանդարտ դիրքերում եւ երբեք չի նահանջում»:**

**Իսկ ի՞նչ կլինի, եթե Կառլսենին չհաջողվի հաղթող ճանաչվել մրցաշարում: Այս հարցին նորվեգացին հետեւյալն է պատասխանել. «Եթե իմ արդյունքը լինի +4, իսկ Արոնյանինը՝ +6, ապա կհամարեմ, որ մրցաշարն ինձ համար լավ էր դասավորվել: Իսկ եթե զգամ, որ չկարողացա ցուցադրել ինձ բնորոշ խաղը, ապա կհիասթափվեմ ելույթիցս: Սակայն կյանքը դրանով չի ավարտվում: Չէ՞ որ ընդամենը 22 տարեկան եմ եւ շախմատային կարիերայիս մեծ մասը դեռեւս առջեւում է»:**

**Հիշեցնենք, որ մարտի 15-ին մեկնարկող հավակնորդների մրցաշարի առաջին տուրում Արոնյանն ու Կառլսենը մրցելու են միմյանց հետ:**

# Մովսիսյանի գոլը լավագույնն է

**Ռուսական «Սպորտ Էքսպրեսը» «Թերեքի» դարպասը Յուրա Մովսիսյանի խփած 2-րդ գոլը լավագույնն է ճանաչել 20-րդ տուրում: Նրա խփած 3-րդ գոլը գրավել է 4-րդ տեղը: Լավագույն գոլերի հնգյակը եզրափակել է Արաս Օզբիլիսի գոլը «Վոլգայի» հետ խաղում:**

# Միխայիլ Մարկոսովը լուրջ վնասվածք է ստացել

**Ռուսական «Ուֆայում» հանդես եկող Հայաստանի հավաքականի թեկնածու Միխայիլ Մարկոսովը «Սիբիրի» հետ խաղում բախվելով մրցակցի դարպասապահի հետ, հեռացվել էր խաղադաշտից: Սակայն միայն կարմիր քարտով այդ միջադեպը չէր ավարտվել: Տուժել էր նաեւ Մարկոսովը, որը քթի կոտրվածք եւ ուղեղի ցնցում էր ստացել:**

**Ինչպես հայտնի է, Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը Մարկոսովին ընդգրկել է չեխերի հետ նախապատրաստվող ֆուտբոլիստների ցանկում: Վնասվածքի պատճառով Մարկոսովը դժվար թե կարողանա մասնակցել մարտի 21-ին սկսվող ՀՀ հավաքականի ուսումնամարզական հավաքին:**

**Հիշեցնենք, որ Մարկոսովն առաջին անգամ հավաքական էր հրավիրվել փետրվարին՝ մասնակցելու Լյուքսեմբուրգի ընտրանու հետ կայանալիք ընկերական հանդիպմանը: Սակայն փաստաթղթային խնդիրների պատճառով նա չէր ժամանել Վալանս:**

# Սամբիստները վիճարկեցին մեդալները

Հայաստանի խուլերի միավորման մշակույթի եւ սպորտի պալատում հանրապետության պատանեկան եւ երիտասարդական առաջնությունների պարգեւները վիճարկեցին սամբիստները: Մրցավեճի էին բռնվել Երեւանի, հանրապետության տարբեր մարզերի եւ Արցախի մարզիկները:

Պատանիների մրցաշարում ըստ քաշային կարգերի չեմպիոններ դարձան Դավիթ Խաչատրյանը (48 կգ), Կարեն Մինասյանը (52 կգ), Ստեփան Սարգսյանը (56 կգ), Գրիգորի Նիկողոսյանը (60 կգ), Հարություն Առաքելյանը (65 կգ), Արթուր Հովհաննիսյանը (70 կգ), Գառնիկ Սարոյանը (75 կգ), Սամվել Հակոբյանը (81 կգ), Էդիկ Պետրոսյանը (87 կգ) եւ Ալբերտ Սարգսյանը (գերծանր քաշ):

Երիտասարդների պայքարում ուժեղագույններ ճանաչվեցին Ջիվան Ղազարյանը (48 կգ), Գրիգոր Մխիթարյանը (52 կգ), Մաքսիմ Մանուկյանը (57 կգ), Արթուր Սահակյանը (62 կգ), Ռաֆիկ Մանուկյանը (68 կգ), Արթուր Հակոբյանը (74 կգ), Մինաս Մադոյանը (82 կգ), Սեյրան Սահակյանը (90 կգ), Ռազմիկ Հովհաննիսյանը (100 կգ) եւ գերծանրքաշային Գարեգին Կիրակոսյանը:

Առաջնության մրցանակակիրները պարգեւատրվեցին մեդալներով, համապատասխան կարգի դիպլոմներով ու դրամական պարգեւներով: Առաջնության արդյունքներով կկազմավորվի Հայաստանի սամբոյի պատանեկան հավաքականը, որը կմասնակցի ապրիլի 11-15-ը Կիպրոսում կայանալիք Եվրոպայի պատանեկան առաջնությանը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման արտոնագրեր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ` ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման արտոնագրեր ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին`

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող`

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. ապրիլի 22-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց, 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. ապրիլի 22-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2012թ. ապրիլի 29-ին ժամը 16:00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է`

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային **WEB** կայքում (**www.cba.am**):

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ` «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

***ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար անվտանգության սարքավորումներ ձեռքբերելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ` ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար անվտանգության սարքավորումներ ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին`

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող`

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. ապրիլի 22-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. ապրիլի 22-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. ապրիլի 29-ին ժամը 16-00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է`

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային **WEB** կայքում (**www.cba.am**):

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ` «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

***ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն***

**Հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի**
**«11» մարտի 2013 թ. թիվ ---- որոշմամբ**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամ**
**հիմնադրամի 2012 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը` «**Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների**» **Հիմնադրամ**:

1.1 Գրանցման համարը - 222.160.00970,
1.2 Գրանցման ամսաթիվը - 08.12.1998 թ.,
1.3 Գտնվելու վայրը - **ԼՂՀ, Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր**,
1.4 Հեռ. - 010552537
1.5 Բջջ. - 091219854
1.6 Կայք -
1.7 Էլ. փոստ - gmelikian@ysu.am

2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը`
**Գուրգեն Մելիքյան**

*անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)*

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները`

*անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)*

4. **Աշխատակազմը` Գուրգեն Մելիքյան**

5. **Իրականացված ծրագրերը`** Բարեգործական օգնություն Հայաստանի Հանրապետությունում եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող բազմազավակ ընտանիքներին` ուսման վարձի վճարման եւ խոշոր եղջերավոր անասուն ձեռք բերելու գործում:

6. **Ֆինանսավորման աղբյուրները`** 2012 թ.-ի ֆինանսական միջոցները գոյացել են անհատ բարերարների եւ տարբեր նվիրատուների նվիրատվություններից, հանգանակություններից:

*Ֆինանսավորողի անունը (անվանումը), ծրագրի անվանումը, ֆինանսավորման չափը (դրամական արտահասյությամբ)*

**7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը`** 2012 թ.-ին ծախսվել է` 46552.0 հազ. դրամ:

**7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը`**

Հիմնադրամի միջոցներից կանոնադրությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացման համար 2012 թ. ծախսվել է` 46522.0 հազ. դրամ:

**8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի անվանումը`** «Երեւան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ:

**9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը 2 թերթից:**

***10. Հիմնադրամի տնօրեն`***
***Գուրգեն Մելիքյան***
***11. Գլխավոր հաշվապահ***

**«ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ**
**YEREVAN-AUDITCONSULT CJSC**

**ՀՀ, ք. Երեւան, Բրյուսովի 26 Հեռ.` +37410 20 91 80**
**ՀՀ, ք. Երեւան, Ազատության 24/17 Բջջ.` +37493 25 05 80**
**info@yerevanaudit.am**
***«11» մարտի 2013 թ.***

*ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն /Լիցենզիա ԱԾN 052*

***«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամ 2012 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ***

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին եւ Տնօրեն` Գուրգեն Մելիքյանին*

**Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

Մեր կողմից իրականացվել է «Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը առ 31-ը դեկտեմբերի 2012 թ-ի, հաշվետու տարվա ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական տեղեկատվություն:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի հետեւանքով էական խեղաթյուրումից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզնից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները եւ պլանավորել եւ անցկացնել աուդիտը` ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր` ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Հիմնադրամի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են եւ համապատասխան` մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

**Կարծիքի ձեւափոխման հիմքեր**

Մենք չենք իրականացրել Ընկերության 2012 թ. ակտիվների (ակտիվներին վերաբերող շնորհներ) գույքագրում, քանի որ նշանակվել ենք Ընկերության Աուդիտորներ 10 հունվարի 2013 թ.: Ընկերության գործունեության բնույթից ելնելով մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով ձեռք բերել բավարար տվյալներ ակտիվների (ակտիվներին վերաբերող շնորհներ) վերաբերյալ:

**Ձեւափոխված կարծիք**

Մեր կարծիքով, բացառությամբ Կարծիքի ձեւափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամի ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2012 թ., ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու 2012 թ. տարվա համար` ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

*Հաստատված է*
*«Երեւան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ*
*Տնօրեն`* *Լ. Ղոնյան*
*Որակավորման վկայական թիվ 022*
*Աուդիտոր`* *Ա. Բերբերյան*
*Որակավորման վկայական թիվ 017*

*«11» մարտի 2013 թ.*

1. ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ` Կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ԳԱԶՈՄԵՐ» ՀՁ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը`

Արտադրամաս, ընդ. մակերեսն է` 1125.1 ք.մ, հողամաս` 0.5 հա (վարձակալություն): Լոտի գտնվելու վայրի հասցեն է` ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս: Լոտի մեկնարկային գինը` 7870000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել` ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ` աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար` կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 235000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին (.ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով` 29.03.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը` 01.04.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին: Աճուրդի ավարտը` 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը` վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին` ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան 12.3.2013, գինը` 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: